«ԿԱՆԱՉ ՔԱՂԱՔԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՀԱՄԱՐ» ԾՐԱԳՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

ԶԵԿՈՒՅՑ

Երևան 2023թ.

Բովանդակություն

1. Հապավումներ ……..3
2. Ներածություն……4
3. Գյումրի քաղաքի մասին……..4
4. «Կանաչ քաղաք» ծրագրի մասին……5
5. Հայաստանի ներգրավվածությունը «Կանաչ քաղաք» գործողությունների ծրագրին……. 7
6. Գյումրու ԿՔԳԾ-ում արտահայտված բնապահպանական թեմաների, թիրախների և դրանց հասնելուն ուղղված միջոցառումների մասին…… 7
7. Գյումրիում իրականացվող ծրագրերը……21
8. Եզրակացություն.....……25
9. Աղբյուրներ……27
10. Հավելված 1……28
11. Հավելված 2……33
12. Հավելված 3……37

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

ԱՀԿ - Առողջապահության համաշխարհային կազմակերպություն

ԱՄՆ- Ամերիկայի Միացյալ Նահանգներ

ԱՏՀ – աշխարհագրական տեղեկատվական համակարգ

ԲՍԱԳ -բնապահպանական և սոցիալական ազդեցության գնահատական

ԵՄ – Եվրոպական միություն

ԷԾՄԸ - էներգետիկ ծառայություններ մատուցող ընկերություն

ԷԿՊ - էներգախնայողության կատարողականի պայմանագիր

ԻԺՈւՏ - իրական ժամանակում ուղևորներին տրամադրվող տեղեկատվություն

ԿՋ - կեղտաջուր

ԿՔԳԾ -Կանաչ քաղաք գործողությունների ծրագիր

ԿՔՇԾ - կայուն քաղաքային շարժունակության ծրագիր

ՀԷՑ – Հայկական էլեկտրական ցանցեր

ՀԿ -հասարակական կազմակերպություն

ՀՆԱ - համախառն ներքին արդյունք

ՀՆԳ - հեղուկացված նավթային գազ

ՀՆԳԾ - հոսակորստի նվազեցման գործողությունների ծրագիր

ՉՀՋ - չհաշվառված ջուր

ՊՄԳ - պետություն-մասնավոր գործընկերություն

ՊՈԱԿ -պետական ոչ առևտրային կազմակերպություն

ՍԲԳ - սեղմված բնական գազ

ՍԹԿ -սահմանային թույլատրելի կոնցենտրացիա

ՎԶԵԲ -Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկ

ՎԷՀ - վերականգնվող էներգիայի համակարգ

ՏՄ - տեղեկատվական մոդել

ՔԿԹ - քաղաքային կոշտ կենցաղային թափոն

ԹԿՊ5 - թթվածնի կենսաքիմիական պահանջարկ

CO_2 - ածխաթթու գազ

SO_2 - ծծմբային անհիդրիդ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

«ԷկոԼուր» տեղեկատվական ՀԿ-ն CEE Bankwatch Network միջազգային կազմակերպության աջակցությամբ իրականացրել է «Եղիր տեղեկացված Երևանում և Գյումրիում Կանաչ քաղաքների պլանների և ծրագրերի մասին» ծրագիրը, որի շրջանակներում ուսումնասիրել է «Կանաչ քաղաքի գործողությունների ծրագիր Գյումրի քաղաքի համար» ծրագիրը: Այն մշակվել է Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի (ՎԶԵԲ) «Կանաչ քաղաք» ծրագրի շրջանակներում:

Զեկույցի պատրաստման համար ուսումնասիրվել են «Կանաչ քաղաքի գործողությունների ծրագիր Գյումրի քաղաքի համար» ծրագրի «ջուր», «կոշտ թափոններ», «արդյունաբերություն», «տրանսպորտ», «շինարարություն», «լուսավորություն և էներգամատակարարում, հողօգտագործում» ոլորտները: Այս ոլորտների համար առաջարկված միջոցառումները միտված են հասնելու Գյումրու ԿՔԳԾ-ում նշված բնապահպանական «Օդի որակ և ջերմոցային գազերի (ՋԳ) արտանետումների նվազեցում», «Ջրային ռեսուրս», «Հողեր», «Կանաչ տարածք, կենսաբազմազանություն, էկոհամակարգեր», «Դիմակայունություն և հարմարվողականություն տարերային աղետների ռիսկերին» թեմաների շրջանակներում սահմանված թիրախներին:

Ուսումնասիրվել է համացանցում առկա բաց տեղեկատվությունը, Գյումրու քաղաքապետարանի, ՀՀ կառավարության, ՀՀ շրջակա միջավայրի նախարարության, Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի պաշտոնական կայքերը, զարգացման ծրագրերը: Իրականացվել է նամակագրություն Գյումրու քաղաքապետարանի և «Հայկական էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի հետ:

Եզրահանգումները հիմնված են ինչպես հասանելի աղբյուրների, փաստաթղթերի, առկա իրավիճակի ուսումնասիրությունների, այնպես էլ՝ Գյումրու համայնքապետարանի պատասխանների վրա:

ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՄԱՍԻՆ

Գյումրին Հայաստանի՝ մեծությամբ երկրորդ քաղաքն է: Գտնվում է Հայաստանի հյուսիս-արևմուտքում՝ Ախուրյան գետի ձախ ափին, Շիրակի բարձրավանդակի կենտրոնական մասում, ծովի մակարդակից 1550 մետր բարձրություն ունեցող հարթավայրում: Քաղաքի վարչական տարածքը 4429,5 հա է, 2018թ. տվյալներով ունի 158 հազար 826 բնակիչ: Գյումրին Շիրակի մարզի բնակչության ֆինանսական կենտրոնն է, քանի որ քաղաքում գործում են Հայաստանի 12 բանկերի և 6 վարկային կազմակերպությունների մասնաճյուղերը:

Սեյսմիկ ռիսկը մեծ է Գյումրիում՝ պայմանավորված քաղաքից 150 կմ-ի վրա գտնվող մի քանի ակտիվ խզվածքներով: Գյումրիում տեղի են ունեցել Ռիխտերի սանդղակով ավելի քան 8 մագնիտուդ ուժգնությամբ բազմաթիվ երկրաշարժեր, որոնցից ամենաավերիչները եղել են 1846թ., 1926թ. և 1988թ.:

Նախքան 1988թ. երկրաշարժը Գյումրիում գրանցված 41% ՀՆԱ-ի աճը երկրաշարժի

հետևանքով նվազել էր մինչև -11%: 20 տարի անց այն կազմել է մոտ 7%:[1] Երկրաշարժի հետևանքով վնասվել էին էլեկտրամատակարարման և ջրամատակարարման համակարգերն ու գազատարները: Հայաստանը կորցրել էր իր արտադրական ներուժի մոտ 40%-ը, քանի որ շատ արդյունաբերական գործարաններ ավերվել էին կամ վնասվել: Ներկայում լուրջ արդյունաբերական զարգացում Գյումրիում չկա: Մոտ 2150 գրանցված մասնավոր ձեռնարկությունների ավելի քան 80%-ն անհատ ձեռնարկատերեր են, իսկ միջին և մեծ ընկերությունները 1%-ից պակաս են: Վերջիններս արտադրական ձեռնարկություններ են, այդ թվում՝ սննդի, տեքստիլի, էլեկտրոնիկայի, մեքենայական սարքավորումների արտադրությամբ և մետաղի մշակմամբ զբաղվող, մինչդեռ մասնավոր ձեռնարկությունների մեծ մասը հիմնականում աշխատում է մանրածախ վաճառքի և ծառայությունների ոլորտում:

Գյումրին խոշոր տրանսպորտային հանգույց է, որը միջպետական մայրուղով և երկաթուղային կայարանով կապված է Հայաստանն ու Վրաստանը միմյանց կապող Երևան-Թբիլիսի-Բաթումի երկաթուղու և Շիրակի միջազգային օդանավակայանի հետ:

Գյումրու տնտեսության գլխավոր զարգացող ճյուղը զբոսաշրջությունն է: Գյումրին բնակավայր է եղել դեռ անհիշելի ժամանակներից: Տարածքում հայտնաբերվել են հնագիտական (մ.թ.ա. III հազարամյակից մինչև ուշ միջնադար) հուշարձաններ: Մինչև XIX դարի սկիզբը Գյումրին ընկել է մերթ Պարսկաստանի, մերթ Թուրքիայի տիրապետության տակ, ինչի պատճառով բազմիցս թալանվել է ու ավերվել: Գյումրու զարգացման ամենանշանակալի շրջանը դարձել է XIX դարը, երբ 1804 թ.՝ ռուս-պարսկական առաջին պատերազմի ժամանակ այն հարակից տարածքներով հանդերձ մտել է Ռուսաստանի կազմի մեջ: Ներկայում այն Հայաստանի Հանրապետության՝ մեծությամբ երկրորդ քաղաքն է:

Գյումրու տեղական ինքնակառավարումը հիմնվում է «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքով սահմանված սկզբունքների վրա: Գյումրու տեղական ինքնակառավարման մարմիններն են ավագանին և քաղաքապետը:

«ԿԱՆԱՉ ՔԱՂԱՔ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

ՎԶԵԲ-ի «Կանաչ քաղաք» ծրագիրը նախաձեռնվել է 2016 թվականին: Այն միտված է Բանկի գործունեության բոլոր երկրների քաղաքներում նպաստելու կանաչ տնտեսության անցմանը:

«Կանաչ քաղաքներ» ծրագրի նպատակն է.

1. Պահպանել բնապահպանական ակտիվների որակը (օդ, ջուր, հող և կենսաբազմազանություն) և օգտագործել այդ ռեսուրսները կայուն կերպով:
2. Մեղմացնել և հարմարվել կլիմայի փոփոխության ռիսկերին:

[1] «Կանաչ քաղաքի գործողությունների ծրագիր Գյումրի քաղաքի համար» ծրագիր

3. Ապահովել, որ բնապահպանական քաղաքականությունը և զարգացումները նպաստեն բնակիչների սոցիալական և տնտեսական բարեկեցությանը:[2]

Ծրագիրն ունի հետևյալ բաղադրիչները՝

1. **Կանաչ քաղաք գործողությունների՝ ծրագիր**: Այն գնահատում է բնապահպանական մարտահրավերները և առաջնահերթությունները, մշակում գործողությունների ծրագիր այդ մարտահրավերներին դիմակայելու համար:

2. **Կայուն ենթակառուցվածքային ներդրումներ**: Ներդրումները միտված են դյուրացնելու և խթանելու հանրային կամ մասնավոր կանաչ ներդրումները ջրի և կեղտաջրերի, քաղաքային տրանսպորտի, էներգիայի, շենքերի էներգաարդյունավետության, կոշտ թափոնների և այլ ոլորտներում, բարելավելու կլիմայի փոփոխության նկատմամբ քաղաքի հարմարվողականությունը և կլիմայական ցնցումներին դիմադրողականությունը:

3. **Կարողությունների զարգացում**: Այս բաղադրիչը միտված է քաղաքային ղեկավարությանը և տեղական շահագրգիռ կողմերին տեխնիկական աջակցություն տրամադրել՝ ապահովելու, որ ենթակառուցվածքային ներդրումները և «Կանաչ քաղաք» գործողությունների ծրագրում նշված քաղաքականության միջոցառումները արդյունավետ մշակվեն, իրականացվեն և վերահսկվեն:

Ծրագիրն իրականացնում են տարբեր մարմիններ, տարբեր ֆինանսական ինստիտուտներ:

Կանաչ քաղաքներ շրջանակային ծրագրի (GrCF, 48171) համար հաստատված ընդհանուր դրամագլուխը 2016թ. կազմել է **250 միլիոն եվրո՝** հինգ տարի սպասվող տևողության համար: Նախատեսված էր Ծրագրի կենտրոնացում առաջին հերթին Կովկասում, Մոլդովայում և Բելառուսում, հետագայում՝ Արևմտյան Բալկաններում: Հատկացվող վարկերը նախատեսված են եղել կառավարությունների, քաղաքապետարանների, համայնքային սեփականություն հանդիսացող կոմունալ ընկերությունների և քաղաքային ծառայություններ մատուցող ընկերությունների համար:

Կանաչ քաղաքներ շրջանակային ծրագրի արագ իրականացման շնորհիվ 2018 թ. ներկայացվել է Կանաչ քաղաքներ շրջանակային ծրագիր 2 շրջանակը (GrCF2, 50440 և 50674) **700 միլիոն եվրոյի** նախատեսվող դրամագլխով հաջորդ հինգ տարիների համար: Այն նախատեսվել է քաղաքային ենթակառուցվածքներում ներդրումների՝ միաժամանակ կլիմայի փոփոխության և բնապահպանական մարտահրավերների հաղթահարման համար: GrCF2 դրամագլուխը 2020 թվականի հոկտեմբերին ավելացվել է՝ հասնելով **950 միլիոն եվրոյի**: 2021 թվականի նոյեմբերին GrCF2 պատուհան II-ի (53170) նորացումը հաստատվել է 2 միլիարդ եվրոյի դրամագլխով[3]:

Արդեն ՎԶԵԲ-ը հայտարարում է ընդհանուր 5 միլիարդ եվրոյի դրամագլխի, 50-ից ավելի քաղաքների «Կանաչ քաղաք» ծրագրին միանալու, քաղաքապետարանների

[2] https://www.ebrdgreencities.com/green-cities/about/

[3] ՎԶԵԲ-ի 2022թ. մարտի ««Կանաչ քաղաքներ» ծրագրի միջանկյալ գնահատում» փաստաթուղթ

կողմից 22 «Կանաչ քաղաք» գործողությունների ծրագրերի հաստատման, 83 նախագծերի իրականացման մասին:[4]

Հայաստանի ներգրավվածությունը «Կանաչ քաղաք» գործողությունների ծրագրին

«Կանաչ քաղաք» գործողությունների ծրագրի մաս են կազմում Երևան և Գյումրի քաղաքները:

«Կանաչ քաղաքի գործողությունների ծրագիր Գյումրի քաղաքի համար» ծրագրի մշակումը ֆինանսավորել է ՎԶԵԲ-ի շահառուների հատուկ հիմնադրամը (SSF): Այն մշակել է «Ատկինս», «Էյչ-Սի-Էլ Քնսալթինգ» և Էլ-Դի-Քեյ (Atkins Acuity, HCL Consulting և LDK) ընկերությունների միջազգային փորձագիտական խումբը: Ծրագիրը հաստատվել է Գյումրի համայնքի ավագանու 2019թ. դեկտեմբերի 20-ի «Կանաչ քաղաք գործողությունների ծրագիր»-ը հաստատելու մասին» N 232-Ա որոշմամբ:

ԿՔԳԾ-ն ռազմավարական փաստաթուղթ է, որը ներկայացնում է Գյումրու՝ 2035 թվականի բնապահպանական տեսլականը: Փաստաթղթի նպատակն է բարելավել քաղաքի բնապահպանական կատարողականը ծախսարդյունավետ և ֆինանսապես կայուն եղանակով՝ միաժամանակ փորձելով առավելագույնի հասցնել լրացուցիչ տնտեսական և սոցիալական օգուտները:

Գյումրու ԿՔԳԾ-ի տեսլականն է. «Առողջացնել Գյումրի քաղաքի շրջակա միջավայրը և այն դարձնել առավել հարմար քաղաքացիների բնակության համար՝ օդի որակի, ջրային ռեսուրսների և հողօգտագործման բարելավման, էկոհամակարգերի պահպանման և կլիմայական փոփոխությունների հետևանքների մեղմման և հարմարողականության միջոցով: Պետք է նաև ստեղծել տնտեսական և տեխնոլոգիական աճի հնարավորություն, ինչի արդյունքում կստեղծվեն նոր աշխատատեղեր, և կբարելավվեն Գյումրու քաղաքացիների կյանքի պայմանները՝ ապահովելով «կանաչ» տնտեսության, կայունության և դիմակայության սկզբունքները: Վերջնանպատակն է քաղաքի շրջակա միջավայրը ապահով, մաքուր և կանաչ դարձնելը, ինչպես նաև նորարարության խթանումը՝ Գյումրու ողջ համայնքի բարեկեցությունն ու բարօրությունն ապահովելու համար»: ԿՔԳԾ-ի տեսլականն իրականացնելու համար ժամկետ է սահմանվել 2030-2035թթ.:

ԿՔԳԾ-ի շրջնակներում վերլուծվել և միջոցառումներ են նախատեսվել հետևյալ ոլորտների համար՝ «ջուր», «կոշտ թափոններ», «արդյունաբերություն», «տրանսպորտ», «շինարարություն, լուսավորություն և էներգամատակարարում», «հողօգտագործում»: Այս ոլորտների համար առաջարկված միջոցառումները միտված են հասնելու Գյումրու ԿՔԳԾ-ում նշված բնապահպանական «Օդի որակ և ջերմոցային գազերի (ՋԳ) արտանետումների նվազեցում», «Ջրային ռեսուրս», «Հողեր», «Կանաչ տարածք, կենսաբազմազանություն, էկոհամակարգեր», «Դիմակայունություն և հարմարվողականություն տարերային աղետների ռիսկերին» թեմաների շրջանակներում սահմանված թիրախներին:

[4] https://www.ebrdgreencities.com/

ԳՅՈՒՄՐՈՒ ԿՔԳԾ-ՈՒՄ ԱՐՏԱՀԱՅՏՎԱԾ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԹԵՄԱՆԵՐԻ, ԹԻՐԱԽՆԵՐԻ և ԴՐԱՆՑ ՀԱՄՆԵԼՈՒՆ ՈՒՂՂՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. **«Օդի որակ և ջերմոցային գազերի արտանետումներ»**

Գյումրու մթնոլորտային օդի հիմնական մարտահրավերներն են՝ փոշով աղտոտվածության բարձր մակարդակը, ծծմբի երկօքսիդի օրական կոնցենտրացիայի հետևանքով առաջացող վտանգը, CO_2-ի՝ յուրաքանչյուր շնչին բաժին ընկնող բարձր մակարդակ և CO_2-ի արտանետումների քանակ ՀՆԱ-ի աճի յուրաքանչյուր միավորի համար:

Ըստ Գյումրու ԿՔԳԾ-ի՝ փոշու միջին տարեկան կոնցենտրացիան 325.6 մկգ/մ^3 է, ծծմբի երկօքսիդի (SO_2) միջին օրական կոնցենտրացիան՝ 36.7 մկգ/մ^3, CO_2-ի տարեկան արտանետումներ ՀՆԱ-ի միավորի հաշվով կազմել է ՀՆԱ-ի՝ 0.94 տ/մ. ԱՄՆ դոլար, իսկ CO_2-ի համարժեքի տարեկան արտանետումները մեկ շնչի հաշվով՝ 3.36 տոննա/տարի: Գյումրու օդի որակի վիճակի վրա ճնշում գործադրող (ներազդող) հիմնական ոլորտներն են «տրանսպորտը», «շինարարությունը, էներգասպառումն ու լուսավորությունը»:

✓ **Մինչև 2025թ. միջնաժամկետ թիրախ.**

1. Փոշու միջին տարեկան կոնցենտրացիա՝ 0.15 մկգ/մ^3:
2. CO_2-ի տարեկան արտանետումները ՀՆԱ-ի միավորի հաշվով՝ 20%՝ համեմատած 2014 թ. մակարդակների հետ:
3. CO_2-ի՝ մեկ շնչին համարժեք արտանետումներ՝ 3.0 տոննա/տարի/մեկ շնչի հաշվով:
4. Էներգասպառումն արդյունաբերության ոլորտում՝ ըստ ՀՆԱ-ի մեջ արդյունաբերության ցուցանիշի միավորի՝ 5%՝ համեմատած 2015 թ. մակարդակների հետ:
5. Մասնավոր տրանսպորտային միջոցների օգտագործման տարածվածությունն ամենօրյա երթևեկության մեջ՝ 80%:
6. Անշարժիչ տրանսպորտային միջոցների օգտագործման տարածվածությունն ընդհանուր տեղաշարժի մեջ՝ 2%:
7. Էլեկտրականությամբ սնվող, հիբրիդային շարժիչներով, հեղուկացված նավթային գազով (ՀՆԳ) և սեղմված բնական գազով (ՍԲԳ) աշխատող հանրային տրանսպորտի ընդհանուր շարժակազմի մասնաբաժին՝ 60%:
8. Էլեկտրականությամբ աշխատող քաղաքային տրանսպորտային միջոցների մասնաբաժինը՝ 20%:
9. Էներգասպառումը շենքերում՝ 23 կՎտ/ժ:
10. Էներգասպառումը փողոցային լուսավորության համար՝ 25,000 կՎտժ/կմ:
11. Օդն աղտոտող աղբյուրների հայ
12. տնաբերված և մշտադիտարկվող մասնաբաժին՝ 30%:
13. Տվյալների տարեկան հավաքագրման ենթակա տրանսպորտային միջոցներ՝ 100%:

Այս թիրախներին հասնելու համար «տրանսպորտ», «շենքեր, էներգամատակարարում և լուսավորություն», «կոշտ թափոններ», «արդյունաբերություն», «հողօգտագործում» ոլորտներում նախատեսվել են միջոցառումներ:

Գյումրիում օդի աղտոտվածության ներկա վիճակ

ՀՀ շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կանտրոն» ՊՈԱԿ-ի տվյալների[5] ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ 2022թ-ի բոլոր 4 եռամսյակներում արձանագրվել են փոշու ՍԹԿ-ի գերազանցումներ: Բացառությամբ 1-ին եռամսյակի, մյուս եռամսյակներում այդ գերազանցումներն ավելի բարձր են եղել 2021թ-ի համեմատ: Ազոտի երկօքսիդի և ծծմբի երկօքսիդի ՍԹԿ-ի գերազանցումներ 2021, 2022 թվականներին չեն արձանագրվել:

2022թ. 1-ին եռամսյակ



Գծապատկեր 22. Գյումրի քաղաքի մթնոլորտային օդում փոշու միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները

2022թ. 2-րդ եռամսյակ



Գծապատկեր 22. Գյումրի քաղաքի մթնոլորտային օդում փոշու միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները

2022թ. 3-րդ եռամսյակ

[5] http://armmonitoring.am/page/5



Գծապատկեր 8. Գյումրի քաղաքի մթնոլորտային օդում փոշու միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները

2022թ. 4-րդ եռամսյակ



Գծապատկեր 16. Գյումրի քաղաքի մթնոլորտային օդում փոշու միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները

2. «Կանաչ տարածքներ, կենսաբազմազանություն և էկոհամակարգեր»

Գյումրու ԿՔԳԾ-ի համաձայն՝ կանաչ տարածքները պաշտոնական տվյալներով կազմում են մոտ 552 հա (2017), ինչը քաղաքի ընդհանուր մակերեսի 10%-ն է: Բաց կանաչ տարածքները նվազել են 1988 թվականի երկրաշարժի հետևանքով և 1990-ականների սկզբի էներգետիկ ճգնաժամի ընթացքում, երբ զգալի թվով ծառեր հատվում էին և օգտագործվում որպես վառելիք՝ տները ջեռուցելու համար: Բաց կանաչ տարածքների հարաբերակցությունը Գյումրու յուրաքանչյուր բնակչի հաշվով կազմել է 3.91 մ²/բնակիչ, մինչդեռ Առողջապահության համաշխարհային կազմակերպության (ԱՀԿ) կողմից առաջարկվող նվազագույն արժեքը 9 մ² է: Գյումրու՝ 2006 թվականին հաստատված հատակագծով նախատեսվում էր 17 մ² կանաչ տարածք յուրաքանչյուր բնակչի հաշվով, սակայն այս հարաբերակցությունը երբեք չի ապահովվել: Նման հավակնոտ թիրախի հասնելու համար կարևոր է կանաչ տարածքների վերականգնումը և նորացումը ներառել համապատասխան քաղաքաշինական նախագծերում: Բացի այդ, քաղաքի գլխավոր պողոտաներում աճող ծառերի խտությունը նույնպես անբավարար է: Պահպանման գոտում ներառված արվարձանների բուֆերային գոտիների ճամփեզրերին գտնվող ծառերը նույնպես հատվել են 1988 թվականից ի վեր: Ծառուղիների մեծ մասն ընդհատվում է կամ մնացել է մեկ շարքով, ինչը նվազեցնում է դրանց նշանակությունը:

2025թ. միջնաժամկետ թիրախ.

1. Մեկ բնակչի հաշվով կանաչ տարածքի ավելացում՝ մինչև 6 մ^2:
2. Թռչունների տեսակների տարեկան աճ:
3. Քաղաքային ծառայությունների համապատասխան քաղաքականության և պլանավորման ոլորտում ժամանակակակից պահանջներին համապատասխանող վերապատրաստում անցած աշխատակիցների ներգրավումը պլանավորման բաժին՝ 100%:
4. Հողօգտագործմանը և բնապահպանությանն առնչվող տվյալների մասնաբաժինը հավաքագրված և հասանելի է ԱՏՀ հարթակում՝ 50%:

Այս թիրախներին հասնելու համար նախատեսվում են մի շարք միջոցառումներ «հողօգտագործում» ոլորտում:

Գյումրիում կանաչ տարածքների ներկա վիճակ

2020թ-ին Գյումրի համայնքի հնգամյա զարգացման ծրագրի (2017-2021թթ.) իրականացման վերաբերյալ հաշվետվության համաձայն[6]՝ համայնքի կանաչ տարածքների համար նախատեսվել է 1.1% աճ, ինչը չի ապահովվել:[7] 2021թ-ին նախատեսվել է 1.4%, սակայն իրականացվել է 1%-ի չափով[8]: 2022թ-ի համար նախատեսվել է կանաչ տարածքներն ավելացնել 1%-ով: 2022թ-ի զարգացման ծրագրի իրականացման հաշվետվությունը հրապարակված չէ:

Գյումրու քաղաքապետարանի հաշվետվություններում կանաչ տարածքների վերաբերյալ տվյալները համահունչ չեն Գյումրու ԿՔԳԾ-ին:

3. Հողեր

Ըստ Գյումրու ԿՔԳԾ-ի՝ հողի որակին առնչվող տվյալները սուղ են, չկա պարբերական մշտադիտարկում: Քաղաքի աղտոտված և աղտոտման ենթակա տարածքների հողերը գույքագրված չեն, և առկա չէ աղտոտված տարածքների գրանցամատյան: Որոշ գիտական ուսումնասիրություններ մատնանշում են աղտոտիչների մտահոգիչ մակարդակ: Օրինակ, հողում ծանր մետաղների առկայության վերլուծությունը Գյումրու 22 մանկապարտեզների հարակից տարածքներում ցույց է տվել, որ այնտեղ առկա է չափավոր և միջին մակարդակների աղտոտվածություն: Բարձր աղտոտվածություն ունեցող տարածքները գրանցված են քաղաքի որոշ բնակելի հատվածներում: Քաղաքացիների և ՀԿ-ների հարցումների արդյունքում հաստատվել է չլիազորված աղբավայրերի գոյություն:

- ✓ **Մինչև 2025թ. միջնաժամկետ թիրախ**

[6] https://www.gyumricity.am/data/legalacts/2021/%D5%B0%D5%B6%D5%A3%D5%A1%D5%B4%D5%B5%D5%A1_%D5%A6%D5%A1%D6%80%D5%A3%D5%A1%D6%81%D5%B4%D5%A1%D5%B6_%D5%AE%D6%80%D5%A1%D5%A3%D5%AB%D6%80_1.pdf

[7] https://www.gyumricity.am/data/Hamaynqayin_Byuje/hngamya.PDF

[8] https://www.gyumricity.am/data/Hamaynqayin_Byuje/27.1.pdf

1. ՔԿԹ-ի և այլ թափոնների (այդ թվում՝ վտանգավոր(ՎԹ) այն տոկոսը, որը հեռացվել և տեղափոխվել է ԵՄ չափանիշներին համապատասխանող սանիտարական աղբավայրեր՝ 95%,
2. Տեսակավորվող և վերամշակվող ՔԿԹ-ի հարաբերակցություն՝ 25%,
3. Վերամշակված արդյունաբերական թափոնների բաժնեմասը այդ թափոնների ընդհանուր ծավալում՝ 25%,
4. Թափոն արտադրողների այն տոկոսը, որոնք օգտվում են թափոնների հեռացման վճարովի, գործարքային ծառայությունից՝ 80%,
5. Աղտոտված և աղտոտման ենթակա տարածքների թվի նվազում 40%՝ համեմատած 2017թ. մակարդակների հետ:

Այս թիրախներին հասնելու համար նախատեսվում են մի շարք միջոցառումներ «Արդյունաբերություն», «Կոշտ թափոններ» ոլորտներում:

Գյումրու հողի և թափոնների ներկա վիճակ

ՀՀ շրջակա միջավայրի նախարարության կողմից Շիրակի մարզում, այդ թվում Գյումրիում կատարվում է հողում մետաղների՝ արսենի, քրոմի, պղնձի, նիկելի, վանադումի, ցինկի մոնիթորինգ, համաձայն որի 2021թ. Շիրակի մարզի ուսումնասիրված հողերում՝ ՀՀ առողջապահության նախարարի 2010 թվականի հունվարի 25-ի N01-Ն հրամանով սահմանված ՍԹԿ-ները գերազանցում են՝ վանադիումի պարունակությունը՝ 1.1-2.5 անգամ, քրոմի պարունակությունը՝ 1.7-54.0 անգամ, նիկելի պարունակությունը՝ 6.0-37.8 անգամ, պղնձի պարունակությունը՝ 7.7-24.3 անգամ, ցինկի պարունակությունը՝ 2.2-8.3 անգամ, արսենի պարունակությունը՝ 4.0-21.0 անգամ և կապարի պարունակությունը՝ 1.7 անգամ:[9]



Նկար 1. Շիրակի մարզի հողերում վանադիումի պարունակությունն ըստ «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի պաշտոնական կայքի

[9] http://armmonitoring.am/page/29

Գյումրու համայնքապետարանի 2020-2021թթ. զարգացման ծրագրերի իրականացման հաշվետվությունների համաձայն՝ համայնքում հավաքվել և աղբավայր է տեղափոխվել 95-96% աղբ, որքան որ պլանավորված է եղել նախապես: Նախատեսված 5%-ի փոխարեն միայն 2021թ. մաքրվել է 2.2% տարածք: Նշվել է, որ բնակիչները բավարարված են աղբահանումից և սանիտարական մաքրումից:

Նկար 2. Աղբահանությունը Գյումրիում

Աղբի տեսակավորման, վերամշակման վերաբերյալ տվյալներ հաշվետվություններում չկան:

Գյումրին չունի ԵՄ չափորոշիչներին համապատասխան աղբավայր:

4. Ջրային ռեսուրսներ

Ջրային ռեսուրսին առնչվող Գյումրու առջև ծառացած կանաչ քաղաքի հիմնական մարտահրավերներն են.

- Կեղտաջրերի (ԿՋ) հավաքման անբավարար համակարգ և դրանց հեռացման անբավարար կարողություն, ինչն առաջացնում է հեղեղների, վատ ջրային միջավայրի և առողջական ռիսկեր
- Ջրամատակարարման համակարգում չհաշվառված ջրի (ՉՀՋ) չափազանց բարձր մակարդակ
- Մակերևութային ջրերի որակի ոչ արդյունավետ մշտադիտարկում
- Ջրի ոչ արդյունավետ օգտագործման վարքագծեր և տվյալների սահմանափակ հասանելիություն ու մշտադիտարկում

Ըստ Գյումրու ԿՔԳԾ-ի՝ թթվածնի կենսաքիմիական պահանջարկը (ԹԿՊ5), մասնավորապես, Ախուրյան գետում 3.44 մգ/լ է եղել, ամոնիումի (NH4) կոնցենտրացիան՝ 1.78 մգ/լ, ինչը բացասական ներգործություն կարող է ունենալ ծածանազգի ձկների և սաղմոնազգիների պոպուլյացիաների առողջության և կենսական գործառույթների համար:

Սպառողներին բաշխվելու ընթացքում կորչող և չհաշվառվող ջրի ծավալի խոշոր բաժնեմասն ըստ չափումների եղել է 85-87%:

Գյումրու տարածքով հոսող երեք փոքր՝ Գյումրու, Ղոր-Ղոբիի և Չերքեզի ձորի գետերի մակերևութային ջրի որակը չի թեստավորվում կամ մշտադիտարկվում: Այս գետերից հոսող չմշակված ջուրը հոսում է դեպի Ախուրյան գետ և այնուհետև սահմանային գոտում գտնվող Ախուրյանի ջրամբար, որը ոռոգման համար հիմնական ջրամատակարարման աղբյուրն է:

Չնայած մակերևութային ջրերի կենսաբանական աղտոտիչների և անմիջական շփումից հնարավոր առողջական ռիսկերի ցուցանիշների (այսինքն՝ աղիքային կոլիֆորմի բակտերիաների) մասով մշտադիտարկում չի կատարվում, Գյումրու անասնապահության գործելակերպը, ինչպես նաև հիվանդանոցային արտահոսքերը ենթադրում են Ախուրյան գետի կենսաբանական աղտոտման բարձր ռիսկեր:

- ✓ **Մինչև 2025թ. միջնաժամկետ թիրախ**

1. Ամոնիումի (NH4) կոնցենտրացիան գետերում և լճերում՝ 0.4-1.2 մգ/լ

2. Արդյունաբերական ջրի սպառումը որպես քաղաքային ջրի ընդհանուր սպառման տոկոս՝ 25%

3. Ջրամատակարարման ցանցի ծածկույթը և արդյունավետությունը բարելավվում են պլանների ու ներդրումների միջոցով՝ 75%

4. Անձրևաջրերի կամ կեղտաջրերի արտահոսքերի տարեկան քանակը՝ ցանցի երկարության 100 կմ-ի հաշվով՝ 50% նվազեցում՝ համեմատած 2017 թ. մակարդակների հետ

5. Կենցաղային և առևտրային ԿՋ-ի այն տոկոսը, որը մաքրվում է համաձայն կիրառվող ազգային չափանիշների՝ 60%

6. Չհաշվառված ջուր՝ 25-35%

7. Ջրի սպառումը քաղաքի ՀՆԱ-ի մեկ միավորի հաշվով՝ 0.4 մ³/տարի

8. Ջրի խնայողությունն ու կրկնակի օգտագործումը խրախուսվում են իրազեկման արշավների միջոցով՝ Հաղորդակցման մշակված ռազմավարություն և իրազեկման արշավ

9. Ջրային ռեսուրսները, այդ թվում՝ դրանց վիճակի և օգտագործման մասին տեղեկատվությունը, մինչև 2021թ. կներառվեն ԱՏՀ՝ 50%

Գյումրիում ջրի ներկա վիճակ

ՀՀ շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի 2022թ. 4-րդ եռամսյակի տվյալների համաձայն Ախուրյան գետի ջրի որակը Ամասիա գյուղից ներքև, Գյումրի քաղաքից վերև և Բագարան գյուղից ներքև հատվածներում նոյեմբերին գնահատվել է «միջակ» (3-րդ դաս), Գյումրի քաղաքից ներքև՝ «վատ» (5-րդ դաս)։ 2021թ-ին Ախուրյան գետում հայտնաբերվել է Ֆոսֆատ իոն, արսեն, մանգան, ընդհանուր ֆոսֆոր, կախույթային չոր նյութեր, ամոնիում իոն, նիտրիտ իոն, երկաթ, մոլիբդեն: Գետն ունեցել է 4-րդ դասի աղտոտվածություն ամոնիում իոնի, երկաթի, նիտրիտ իոնի, կախույթային չոր նյութերի, բարձր աղտոտվածության պատճառով:

Քաղաքի 2020-2021թթ. զարգացման ծրագրերի հաշվետվություններում միջոցառումներ նշված չեն ջրային ռեսուրսների համար սահմանված թիրախներին հասնելու վերաբերյալ:

5. Կլիմայի փոփոխության նկատմամբ դիմակայունություն և հարմարվողականություն

Ըստ Գյումրու ԿՔԳԾ-ի՝ բնական աղետների առկա ռիսկն էական մարտահրավեր է հնարավոր տնտեսական կորստի տեսանկյունից: Համապետական ուսումնասիրությունների հիման վրա ռիսկի ենթակա ենթակառուցվածքները և տնային տնտեսությունները ճանաչվել են որպես հիմնական մարտահրավերներ: Գյումրու Աղետների ռիսկի նվազեցման 2018 թվականի պլանով սահմանվում է Գյումրու համար ռիսկ ներկայացնող աղետների, այդ թվում՝ ճանապարհների և արտաքին լուսավորության ոչ բարվոք վիճակի, սեյսմիկ ռիսկերի, ջրհեղեղների և անձրևաջրերի արտահոսքի, գրունտային ջրերի բարձրացման, ինչպես նաև բնակչության ցածր իրազեկվածության մակարդակի առաջնահերթությունը:

✓ **մինչև 2025թ. միջնաժամկետ թիրախ.**

- Աղտոտված այն տարածքների մասնաբաժինը, որը գույքագրվել է, քարտեզագրվել և գնահատվել - 50%
- Ռիսկի ենթակա հանրային ենթակառուցվածքի տոկոսը - 12%
- Ռիսկի ենթակա տնային տնտեսությունների տոկոսը - 12%
- Բնական աղետների՝ հեղեղների, երաշտի, երկրաշարժերի արդյունքում հասցված և գնահատված տնտեսական վնասը՝ որպես ՀՆԱ-ի բաժնեմաս - 1%
- Անցած 5 տարվա ընթացքում ծայրահեղ կլիմայական պայմաններում էլեկտրաէներգիայի երկարատև անջատումների ենթարկված բնակչության միջին մասնաբաժինը - 5%
- ԿՔԳԾ-ի գործողության ընթացքում աղետների ռիսկի նվազեցման և դիմակայունության ուժեղացման համար նախատեսված ֆինանսավորումը - բավարար է աղետների ռիսկի նվազեցման (ԱՌՆ) տեղական պլանների իրականացման համար

Այս թիրախներին հասնելու համար միջոցառումներ են նախատեսվել տրանսպորտ, շինարարություն, լուսավորություն և էներգամատակարարում, ջուր, հողօգտագործում ոլորտներում և միջոլորտային գործողություններում:

Ներկա վիճակ

Քաղաքում իրականացվել են ճանապարհաշինական և քաղաքային լուսավորության փոխարինման որոշակի միջոցառումներ:

Նկար 3. Վերանորոգված Հայուհու հրապարակ

Տրանսպորտ ոլորտ

Գյումրու տրանսպորտային ոլորտի համար քաղաքապետարանի և շահագրգիռ կողմերի հետ համատեղ մշակվել է 14 գործողություն՝ ԿՔԳԾ-ի գործընթացի միջոցով: 14 գործողություններից 8-ը ներառված են առաջնահերթ գործողությունների ցանկում, 6-ն ընդգրկված են որպես լրացուցիչ գործողություններ:

Ներկայացնում ենք առաջնահերթ գործողությունները, որոնց իրականացման ծրագրերի համար պատասխանատու է նշանակվել Գյումրու քաղաքապետարանի տրանսպորտի բաժինը:

1. Նոր հանրային տրանսպորտի ցանցի օպերատորի մոդել, ավտոբուսային հավաքակազմի արդիականացում և միասնական սակագնային ու տոմսային համակարգ: Իրականացման մեկնարկ և ավարտ՝ 2020 – 2024 թթ.:
2. Ավտոբուսային կանգառների ենթակառուցվածքի արդիականացում, այդ թվում՝ իրական ժամանակում ուղևորներին տրամադրվող տեղեկատվության (ԻԺՈւՏ) համակարգի ներդրմամբ: Իրականացման մեկնարկ և ավարտ՝ 2020 – 2024թթ.:
3. Նոր հեծանվային ուղիների և հեծանվային կայանատեղու ենթակառուցվածք: Իրականացման մեկնարկ և ավարտ՝ 2020 – 2024թթ.:

4. Հետիոտնի համար նախատեսված ճանապարհային կողմնորոշիչ նշանների համաքաղաքային ցանց: Իրականացման մեկնարկ և ավարտ՝ 2021 – 2023թթ.:
5. Քայլելուն և հեծանվավազքին նվիրված գովազդային արշավներ: Իրականացման մեկնարկի և ավարտի ամսաթիվ՝ 2020 – 2021թթ.:
6. Կայուն քաղաքային շարժունակության ծրագիր (ԿՔՇԾ) Գյումրու համար: Իրականացման մեկնարկի և ավարտի ամսաթիվ՝ 2020 – 2021թթ.:
7. Տվյալների հավաքագրման համաքաղաքային ծրագիր և տրանսպորտային մոդել: Իրականացման մեկնարկ և ավարտ՝ 2020 – 2022թթ.:
8. Հանրային ավտոբուսների հանրակազմի արդիականացում՝ արտանետումների նվազեցված մակարդակով տրանսպորտային միջոցների համալրմամբ: Իրականացման մեկնարկ և ավարտ՝ 2021 – 2024թթ.:

Շենքեր, էներգամատակարարում և լուսավորություն ոլորտ

Գյումրու՝ շենքերի, էներգամատակարարման և լուսավորության ոլորտի համար մշակվել է 10 առաջնահերթ գործողություն, որոնց համար պատասխանատու է նշանակվել Գյումրու քաղաքապետարանի բնակկոմունալ և շրջակա միջավայրի պահպանության բաժինը:

1. Էներգաարդյունավետության մասին իրազեկում և տեղեկատվության տարածում բնակելի հատվածում: Իրականացման մեկնարկ և ավարտ՝ 2020 – մինչև այժմ:
2. Ցածր եկամուտ ունեցող սպառողների լուսատուները ԼԵԴ լամպերով փոխարինելու արշավ: Իրականացման մեկնարկ և ավարտ՝ 2020 – 2025թթ.:
3. Բնակելի շենքերի ջերմային արդիականացման պետություն-մասնավոր գործընկերության (ՊՄԳ) ծրագիր: Իրականացման մեկնարկ և ավարտ՝ 2020 – 2030թթ.:
4. Համայնքային էներգետիկ տեղեկատվական համակարգ և էներգակառավարում: Իրականացման մեկնարկ և ավարտ՝ 2022 – 2027թթ.:
5. Էներգախնայողության կատարողականի պայմանագրերի (ԷԿՊ) և էներգետիկ ծառայություններ մատուցող ընկերությունների (ԷԾՄԸ) հետ պայմանագրերի կնքում: Իրականացման մեկնարկ և ավարտ՝ 2020 – 2022թթ.:
6. Հանրային շենքերի ջերմային արդիականացման ծրագիր: Իրականացման մեկնարկ և ավարտ՝ 2022 – 2027թթ.:
7. Հանրային գնումներում էներգաարդյունավետ ապրանքների և ծառայությունների ձեռքբերման հայեցակարգային փաստաթղթի մշակում: Իրականացման մեկնարկ և ավարտ՝ 2020թ. – առ այսօր:
8. «Կանաչ» շենքերի խրախուսում: Իրականացման մեկնարկ և ավարտ՝ 2021թ. – առ այսօր:
9. Քաղաքի փողոցային լուսավորության էներգաարդյունավետ արդիականացում: Իրականացման մեկնարկ և ավարտ՝ 2020 – 2022թթ.:
10. Վերականգնվող էներգիայի միջին և խոշոր համակարգերի (ՎԷՀ) ներդրում Իրականացման մեկնարկ և ավարտ՝ 2020 – 2022թթ.:

Արդյունաբերություն ոլորտ

Գյումրու արդյունաբերական ոլորտի համար մշակվել է 5 գործողություն, որոնցից միայն մեկն է առաջնահերթ: Պատասխանատուն Գյումրու քաղաքապետարանի բնակկոմունալ և շրջակա միջավայրի պահպանության բաժինն է:

1. **Աղտոտված արդյունաբերական տարածքների հետազոտում և ռիսկերի նվազեցում: Իրականացման մեկնարկ և ավարտ՝ 2020 – 2022թթ.:**

Կոշտ թափոններ ոլորտ

Գյումրու կոշտ թափոնների ոլորտի համար մշակվել է 6 գործողություն, որոնցից 5-ը ներառված են գործողությունների առաջնահերթ ցանկում, իսկ 1 գործողություն ներկայացվում է որպես լրացուցիչ:

Ներկայացնում ենք առաջնահերթ գործողությունները, որոնց իրականացման ծրագրերի համար պատասխանատու է նշանակվել Գյումրու քաղաքապետարանի բնակկոմունալ և շրջակա միջավայրի պահպանության բաժինը:

1. Ապօրինի բաց աղբավայրերի վերացում և աղտոտված տարածքների վերականգնում, գործող աղբավայրի պատշաճ կառավարում: Իրականացման մեկնարկ և ավարտ՝ 2020 – 2024թթ.
2. Թափոնների հավաքման և դրանց գործող վճարային համակարգերի վերանայում ու վերամշակելի նյութերի հավաքման առանձին համակարգի գործարկում: Իրականացման մեկնարկ և ավարտ՝ 2020 – 2022թթ.:
3. Քաղաքային կոշտ թափոնների հեռացման և վերամշակման նոր ենթակառուցվածքի հիմնում: Իրականացման մեկնարկ և ավարտ՝ 2020 – 2027թթ.:
4. ՔԿԹ մորֆոլոգիայի ուսումնասիրություն և վերամշակման ենթակա նյութերի շուկայական հետազոտություն և թափոնների որակին առնչվող արձանագրությունների մշակում: Իրականացման մեկնարկ և ավարտ՝ 2020 – 2024թթ.:
5. Իրականացնել թափոնների կառավարման իրազեկման պարբերական արշավները: Իրականացման մեկնարկ և ավարտ՝ 2020 – 2024թթ.:

Ջուր ոլորտ

Գյումրու ջրային ոլորտի համար մշակվել է 12 գործողություն, որից 10-ը առաջնահերթ գործողություններ են, 2-ը՝ լրացուցիչ:

Ներկայացնում ենք առաջնահերթ գործողությունները, որոնց իրականացման ծրագրերի համար պատասխանատու է նշանակվել Գյումրու քաղաքապետարանի բնակկոմունալ և շրջակա միջավայրի պահպանության բաժինը:

1. Գյումրու ջրամատակարարման ցանցի ենթակառուցվածքի և ակտիվների համար գույքագրման և ԱՏՀ-ի նախապատրաստում: Իրականացման մեկնարկ և ավարտ՝ 2020 – 2022թթ:
2. Ջրամատակարարման և ջրի պահանջարկի վերաբերյալ բարելավված տվյալներ և վերլուծություն: Իրականացման մեկնարկ և ավարտ՝ 2020 – 2023թթ.:
3. Հոսակորստի նվազեցման գործողությունների ծրագրի (ՀՆԳԾ) մշակում: Իրականացման սկիզբը և ավարտը՝ 2021 – 2022 թթ.:
4. ՀՆԳԾ-ն գործարկելու իրավական և ֆինանսական մեխանիզմները: Իրականացման սկիզբ և ավարտ՝ 2020 – 2022թթ.:
5. Մատակարարման համակարգի՝ արտահոսքի ամենաբարձր մակարդակ ունեցող մասերի նորոգում և վերականգնում: Իրականացման սկիզբը և ավարտը՝ Քայլ 1: 2020 – 2022: Քայլ 2: 2022 – 2025: Քայլ 3: 2022 – 2026թթ.:
6. Պատրաստել գույքագրում և ԱՏՀ կեղտաջրերի ենթակառուցվածքի համար: Իրականացման սկիզբ և ավարտ՝ 2020 – 2022թթ.:
7. Կեղտաջրերի վերաբերյալ գործողությունների ծրագրի և մրցութային փաստաթղթերի կազմում ենթակառուցվածքի առաջարկվող արդիականացման համար: Իրականացման սկիզբ և ավարտ՝ 2021 – 2022թթ.:
8. Դրենաժային համակարգերի վերականգնում և ընդլայնում: Իրականացման սկիզբ և ավարտ՝ 2021 – 2025թթ.:
9. Կեղտաջրերի մաքրման համակարգի վերականգնում և ընդլայնում: Իրականացման սկիզբ և ավարտ՝ 2021 – 2025թթ.:
10. Կանաչ տարածքներում հանրային օգտագործման ջրի ենթակառուցվածքի արդիականացում: Իրականացման սկիզբ և ավարտ՝ 2021 – 2025թթ.:

Հողօգտագործում ոլորտ

Գյումրու հողօգտագործման ոլորտի համար մշակվել է 7 առաջնահերթ գործողություն: Իրականացման համար պատասխանատու է նշանակվել Գյումրու քաղաքապետարանի բնակկոմունալ և շրջակա միջավայրի պահպանության բաժինը:

1. Գյումրի քաղաքի համար մշակել քաղաքային կայուն նախագծման ծրագիր, այդ թվում՝ նորացված գլխավոր հատակագիծ և գոտևորման կանոնակարգեր: Իրականացման սկիզբը և ավարտը՝ 2020 – 2021թթ.:
2. Գյումրու համար մշակել ԱՏՀ-ի վրա հիմնված հողօգտագործման տվյալների բազա և տեղեկատվական մոդել (ՏՄ): Իրականացման սկիզբը և ավարտը՝ 2021 – 2023թթ.:
3. Ստեղծել քաղաքային նախագծման նպատակային ուղեցույց և գործիքներ: Իրականացման սկիզբը և ավարտը՝ 2022 – 2023թթ.:
4. Նախագծման քաղաքականության շինարարական կանոնակարգերի գործարկումը: Իրականացման սկիզբը և ավարտը՝ 2021 – 2030թթ.:
5. Քաղաքային պլանավորում, կայուն զարգացում, հանրային ոլորտի ներուժի զարգացում: Իրականացման սկիզբը և ավարտը՝ 2020 – շարունակական:
6. Հանրային զբոսայգիների, կանաչ տարածքների կառավարման ռազմավարություն: Իրականացման սկիզբը և ավարտը՝ 2020–2029թթ.:

7. Կանաչ ենթակառուցվածքի, զբոսայգիների և բաց տարածքների ապահովում: Իրականացման սկիզբը և ավարտը՝ 2022-2025թթ.:

Միջոլորտային գործողություններ

Միջոլորտային գործողությունները չեն վերաբերում քաղաքային որևէ ոլորտի, բայց ուղղակիորեն կապված են բնապահպանական մարտահրավերների հետ: Մշակվել է 8 միջոլորտային գործողություն, որոնցից 4-ն առաջնահերթ գործողություններ են: Դրանց պատասխանատուն նշանակվել է Գյումրու քաղաքապետարանի բնակկոմունալ և շրջակա միջավայրի պահպանության բաժինը:

1. Իրականացնել ջրի, տրանսպորտի, կոշտ թափոնների, շինարարության, էներգիայի, լուսավորության ոլորտների ենթակառուցվածքների կլիմայի ռիսկի գնահատում: Իրականացման սկիզբը և ավարտը՝ 2020 – 2021թթ.:
2. Կլիմայի փոփոխության նկատմամբ Գյումրու ենթակառուցվածքի դիմակայության բարեկարգման գործողությունների ծրագրի նախապատրաստում: Իրականացման սկիզբ և ավարտ՝ 2021 – 2022թթ.:
3. Նախապատրաստել արտակարգ իրավիճակների պատրաստվածության գործողությունների ծրագիր: Իրականացման սկիզբը և ավարտը՝ 2023 – 2024թթ.:
4. Կլիմայի փոփոխության հարմարվողականության դիմակայության միջոցառումների համար ներդրում: Իրականացման սկիզբ և ավարտ՝ 2024թ. – շարունակական:

ԳՅՈՒՄՐԻՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԾՐԱԳՐԵՐԸ

«Կանաչ քաղաք» գործողությունների ծրագրի շրջանակներում ՎԶԵԲ-ը ֆինանսավորել է երեք վարկային ծրագիր: Դրանք են՝

1. 2016թ. - «Գյումրու քաղաքային ճանապարհներ» ծրագիր, որի համար ՎԶԵԲ-ը տրամադրել է 14,6 միլիոն եվրոյի սուվերեն վարկ Հայաստանին: Ծրագրի ընդհանուր արժեքը 21.9 միլիոն եվրո է:[10]

2. 2017թ. - «ՀԷՑ - Բաշխիչ ցանցի արդիականացում», որի համար ՎԶԵԲ-ը տրամադրել է 80 միլիոն դոլար վարկ: Ծրագրի ընդհանուր արժեքը 200 միլիոն դոլար է:[11]

[10] https://www.ebrd.com/work-with-us/projects/psd/gyumri-urban-roads.html
[11] https://www.ebrd.com/work-with-us/projects/psd/ena-modernisation-of-distribution-network.html

3. 2021թ. - «Հայկական էլեկտրական ցանցեր»-ի ներդրումային ծրագիր» (GrCF2 W2 - ENA Investment Program), որի համար ՎԶԵԲ-ը տրամադրել է 60 միլիոն դոլար վարկ: Ծրագրի ընդհանուր արժեքը 148,400,000.00 ԱՄՆ դոլար է, ներառյալ մինչև 20,000,000 ԱՄՆ դոլար սինդիկացված:[12]

- **«Գյումրու քաղաքային ճանապարհներ» ծրագիր**

Ծրագրի համար ՎԶԵԲ-ը տրամադրել է 14,6 միլիոն եվրոյի սուվերեն վարկ Հայաստանին: Ծրագրի ընդհանուր արժեքը 21.9 միլիոն եվրո է: «Գյումրու քաղաքային ճանապարհներ» ծրագրի ԲՍԱԳ-ի համաձայն՝ նախատեսվել են Գյումրի քաղաքի Երևանի մայրուղի, Գարեգին Նժդեհի պողոտա, Վազգեն Սարգսյանի փողոց, Տիգրան Մեծի պողոտա, Սայաթ-Նովայի փողոց գլխավոր փողոցների, Ն.Ղորղանյան, Վարպետաց, Ջիվանու, Կոմիտասի, Գերցենի երկրորդային փողոցների, Մուշ II ճանապարհի, Ազնավուրի և «Հայուհու» հրապարակների վերանորոգում և լուսավորության արդիականացում էներգախնայող լամպերով, ջրահեռացման համակարգերի վերականգնման աշխատանքներ, հետիոտնային մայթերի վերականգնման աշխատանքներ:

Գյումրու համայնքապետարանի պաշտոնական կայքում հրապարակված պայմանագրերի համաձայն՝Կոմիտաս, Ն.Ղորղանյան, Ջիվանու, Աբովյան փողոցների, Երևանի մայրուղու, Մուշ II ճանապարհի վերականգման և լուսավորության արդիականացման աշխատանքների իրականացնելու համար Գյումրու համայնքապետարանը 2018թ. պայմանագիր է կնքել «Անդրմոսքով» ԲԲԸ-ի հետ, իսկ Գարեգին Նժդեհ, Տիգրան Մեծ մայրուղիների, Հայուհի հրապարակի վերնորոգման աշխատանքներն իրականացնելու համար պայմանագիր է կնքել «Սիսիան Ֆրատ» ՓԲԸ-ի և «Վահագն և Սամվել» ՓԲԸ-ի հետ, Վազգեն Սարգսյան, Գերցենի փողոցների և Շառլ Ազնավոր հրապարակի վերանորոգման աշխատանքների համար պայմանագիր է կնքել «Էյ.Էյ.Բի փրոջեկտ» և «Էլեկտրասերվիս» ՓԲԸ-ների հետ:

2021թ. դեկտեմբերի 9-ի 2017-Ն որոշմամբ[13] Գյումրու քաղաքային ճանապարհներ» ծրագրի 2022 թվականին ստանձնած պարտավորությունների ամբողջ ծավալով կատարելու նպատակով Գյումրու ընտրված փողոցների՝ ներառյալ՝ հետիոտնային անցումների ցանցի և ջրահեռացման համակարգի վերակառուցման համար ՀՀ կառավարությունը տրամադրել է 948 միլիոն 312 հազար դրամ, իսկ 2022թ. նոյեմբերի 3-ի 1695-Ն որոշմամբ[14] ՝ 325 միլիոն 129 հազար դրամ, որից 275 միլիոն 697 հազարը դրամաշնորհ՝ ուղիղ վճարումներ կատարելու նպատակով և 49 միլիոն 433 հազար դրամը՝ որպես համաֆինանսավորում: Գումարները նախատեսված են եղել շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգման, ինչպես նաև մեքենաների և սարքավորումների ձեռքբերման համար:

[12] https://www.ebrd.com/work-with-us/projects/psd/52868.html
[13] https://e-gov.am/gov-decrees/item/37406/
[14] https://e-gov.am/gov-decrees/item/39249/

«ԷկոԼուր» տեղեկատվական ՀԿ-ն 2022թ. դեկտեմբերի 14-ին նամակով դիմել է Գյումրիի քաղաքապետարան, պարզելու համար, թե որքան գումար է հատկացվել ՎՋԵԲ-ի կողմից Գյումրի քաղաքի «Կանաչ քաղաք» գործողությունների ծրագրի մշակման համար: Գյումրու ԿՔԳԾ-ով նախատեսված կարճաժամկետ գործողություններից որո՞նք են իրականացվել, ի՞նչ ծավալով և ամեն գործողության համար որքա՞ն գումար է ծախսվել Ծրագրի մեկնարկից առ այսօր: (տե՛ս հավելված 1)

Ի պատասխան Գյումրու քաղաքաքապետ Վարդգես Սամսոնյանը 2022թ. դեկտեմբերի 20-ի N/01/20018-2022 գրությամբ ԷկոԼուրին հայտնել է. ««Գյումրու քաղաքային ճանապարհներ» ծրագրի շրջանակներում CW-ICB-2019/1 պիլոտային-2 բաղադրիչով քաղաքի թվով 33 փողոցներում 2021թ. տեղադրվել է արտաքին լուսավորության 1201 LED լուսատու ավտոմատ կառավարման համակարգով: Հայտարարված բաց մրցույթի արդյունքում հինգ մասնակիցներից հաղթող է ճանաչվել «ՊրոԴինամիկ» ՍՊԸ-ն և «Գուանդոնգ Մեյսոն Թեքնոլոջիս» լտդ. ՀՁ-ն: Պայմանագրի արժեքը կազմել է 332,523.6 եվրո»: ԿՔԳԾ-ի կատարման մասին այլ տվյալ Գյումրու քաղաքապետի նամակում նշված չէ:

Նկար 4. LED լուսատուներով արդիականացված փողոց Գյումրիում

2023թ. մարտի 20-ին «ԷկոԼուր» տեղեկատվական ՀԿ-ն ևս մի նամակ է ուղարկել Գյումրու համայնքապետարան՝ պարզելու, թե «Գյումրու քաղաքային ճանապարհներ» ծրագրի բնապահպանական և սոցիալական ազդեցության գնահատման փաստաթղթում նշված բոլոր փողոցները վերանորոգվե՞լ են, թե՞ կան փողոցներ, որոնց վերանորոգումն ու լուսավորության արդիականացման աշխատանքները շարունակվում են: ՀՀ կառավարության տրամադրած միջոցներով ի՞նչ շենք-շինություններ են վերանորոգվելու, ի՞նչ մեքենա-սարքավորումներ են ձեռք բերվելու և ի՞նչ նպատակով, ինչպես և հարց է տրվել, թե որքանով են կրճատվել ջերմոցային գազերի արտանետումները «Գյումրու քաղաքային ճանապարհներ» ծրագրի մեկնարկից ի վեր: (տե՛ս Հավելված 2)

Ի պատասխան՝ Գյումրու քաղաքապետարանից 2023թ. մարտի 24-ի 01//4058 նամակում նշված է. ««Գյումրու քաղաքային ճանապարհներ» ծրագրի բնապահպանական և սոցիալական ազդեցության գնահատման հաշվետվությունում ներկայացված փողոցներում և հրապարակներում նախատեսված հիմնանորոգման աշխատանքներն ավարտվել են: Նշված փողոցների ու հրապարակների հիմնանորոգումն իրագործվել է Ծրագրի Ա Տրանշի շրջանակներում: Հիմնանորոգված բոլոր փողոցներում 2021թ. տեղադրվել են լուսադիոդային լուսատուներ, բացառությամբ Վարպետաց, Ջիվանու, Աբովյան և Ղորղանյան փողոցների, որտեղ ճարտարապետական տեսքին համահունչ տեղադրվել են դեկորատիվ հենասյուներ և լուսատուներ: Նորոգվել են նշված փողոցների ջրահեռացման համակարգերը և կատարվել է ճանապարհային կահավորում:

- Հարցման մեջ նշված կառավարության որոշումների համաձայն տրամադրված միջոցներով իրականացվել են Գյումրու քաղաքի թվով 22 փողոցների և 1 հրապարակի հիմնանորոգման աշխատանքները՝ Ծրագրի Բ Տրանշի երեք չափաբաժինների շրջանակներում, ինչպես նաև արտաքին լուսավորության համակարգի արդիականացումը: Առաջին երկու չափաբաժիններով հիմնանորոգվել են Դաշտենց, Սունդուկյան, Աթարբեկյան, Մատնիշյան, Մազմանյան (Գորկու փողոցից մինչև Տերյան), Մազմանյան (Տերյան փողոցից մինչև առաջին գերազմանատուն), Թումանյան, Պուշկին, Մյասնիկյան, Մայակովսկի, Օզանյան, Տեր-Գաբրիելյան փողոցները, Կարսի խճուղին, Կարսի խճուղու առաջին նրբանցքը, Երևանյան խճուղու Այգաբաց 4-րդ շարքը, իսկ երրորդ չափաբաժնով՝ Կայարանամերձ հրապարակը, Արագած թաղամասի մեկ փողոց, Մուսայելյան, Ռուսթավելի, Շինարարների, Տիմիրզայեն փողոցները, Ե/Գ բանավան տանող Գարեգին Ա փողոցը մինչև մանկապարտեզ և Շարա Տալյան փողոցի միջնամասը: Նշված բոլոր փողոցներում և հրապարակում արդիականացվել է փողոցային լուսավորության համակարգը: Նորոգվել կամ լիովին փոխարինվել են նշված փողոցների ջրահեռացման համակարգերը, կատարվել է ճանապարհային կահավորում:

- Ծրագրի շրջանակներում ջերմոցային գազերի արտանետումների ծավալների նվազեցման գնահատում նախատեսված չէ»:

- **2017թ. - «ՀԷՑ - Բաշխիչ ցանցի արդիականացում» ծրագիր**

Այս ծրագրի իրականացման համար ՎԶԵԲ-ը տրամադրել է 80 միլիոն դոլար վարկ: Ծրագրի ընդհանուր արժեքը 200 միլիոն դոլար է:[15] Ծրագիրն ուղղված է եղել բաշխիչ ցանցի արդիականացմանը, այդ թվում՝ Հայաստանի ողջ տարածքում խելացի հաշվառման ներդրմանը: Ծրագիրը միտված է էներգաարդյունավետության բարելավմանը՝ նվազեցնելով տեխնիկական և առևտրային կորուստները, կրճատելու ածխածնի արտանետումները:

Ծրագիրը նախատեսել է.

[15] https://www.ebrd.com/work-with-us/projects/psd/ena-modernisation-of-distribution-network.html

- գոյություն ունեցող ենթակայանների և գծերի վերակառուցում և արդիականացում և հնացած սարքավորումների փոխարինում
- էլեկտրաէներգիայի հաշվառման ավտոմատացված համակարգի ընդլայնում
- ցանցի ընդլայնում և նոր օգտվողների միացում
- նոր ավտոմատ կառավարման համակարգի տեղադրում և այլ օժանդակ ներդրումներ:[16]

➢ **2021թ. - «Հայկական էլեկտրական ցանցեր»-ի ներդրումային ծրագիր (GrCF2 W2 - ENA Investment Program)**

Այս ծրագրի համար ՎԶԵԲ-ը տրամադրել է 60 միլիոն դոլար վարկ: Ծրագրի ընդհանուր արժեքը 148,400,000.00 ԱՄՆ դոլար է, ներառյալ մինչև 20,000,000 ԱՄՆ դոլար սինդիկացված:[17] Ծրագիրը 2017 թվականին կնքված՝ 80 միլիոն ԱՄՆ դոլար գումարի չափով ծրագրի երկարացումն է «Հայաստանի էլեկտրական ցանցերի» 10-ամյա (2016-2027) ներդրումային ծրագրի 1-ին փուլի իրականացման համար: Այն ՀԷՑ-ին հնարավորություն է ընձեռել իրականացնել ներդրումային ծրագրի 2-րդ փուլի 2021-2022թթ.-ի կապիտալ ներդրումները, որոնք, ի թիվս այլ ոլորտների, ուղղված կլինեն նաև Հայաստանի երկու խոշոր քաղաքներին՝ Երևանին և Գյումրիին: Ինչպես նշված է Ծրագրի նկարագրում, այն կօգնի ՀԷՑ-ին բարելավել էներգաարդյունավետությունը, նվազեցնել տեխնիկական և առևտրային կորուստները և, հետևաբար՝ ջերմոցային գազերի արտանետումները: Ծրագիրը նաև նպաստելու է համակարգի արդիականացման և նոր ավտոմատ կառավարման և խելացի հաշվառման համակարգերի կիրառմանը, ինչը օգնելու է բարձրացնել էներգահամակարգի հուսալիությունն ու ճկունությունը՝ մատակարարման ընդհատման միջին ժամանակի զգալի կրճատմամբ, քանի որ այդ ընհատումները թե՛ խաթարիչ են, և թե՛ ծախսատար Գյումրիում և Երևանում բիզնեսների և այլ վերջնական օգտագործողների համար: Նախատեսվում է Հայաստանում զանգվածային ներդնել «խելացի» հաշվիչներ, որոնք թվային տնտեսության «խելացի» ցանցի կարևոր վերջնակետերն են: ՀԷՑ-ի ներդրումային ծրագիրն ուղղված է «Կանաչ քաղաքների գործողությունների պլաններում» սահմանված առաջնահերթություններին և մշակվել է՝ երկու քաղաքների քաղաքապետարանների հետ սերտորեն խորհրդակցելով և հաշվի առնելով «Կանաչ քաղաքների գործողությունների պլանները», որոնք ընկած են երկու քաղաքների նկատառումների հիմքում:[18]

«ԷկոԼուր» տեղեկատվական ՀԿ-ն 2023թ. հունվարի 10-ին նամակով դիմել է «Հայկական էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ը՝ խնդելով տրամադրել տեղեկատվություն վերոնշյալ երկու ծրագրերի կատարման մասին: (տես Հավելված 3)

<u>Ի պատասխան ԷկոԼուրի հարցմանը՝ ՀԷՑ-ի գլխավոր տնօրեն Կարեն Հարությունյանը 2023թ. հունվարի 17-ին N08-ԿՀ-05/24 նամակով հայտնել է,</u> որ Ընկերությունը 2016-2027թթ. համար պլանավորել և իրականացնում է լայնածավալ (347 միլիարդ դրամ)

[16] https://www.ebrd.com/work-with-us/projects/psd/ena-modernisation-of-distribution-network.html
[17] https://www.ebrd.com/work-with-us/projects/psd/52868.html
[18] Կանաչ քաղաքների շրջանակ 2(GrCF2 W2) – «ՀԷՑ» Ներդրումային Ծրագիր

ներդրումային ծրագիր: Ծրագրի շրջանակում ի թիվս այլ նպատակների առկա են աշխատանքներ, որոնք միտված են էլեկտրական էներգիայի տեխնոլոգիական կորուստների կրճատմանը: Դրանցից առավել խոշորներն են՝

- Էլեկտրաէներգիայի ավտոմատ հաշվառման համակարգի ներդրման,

- 6(10) կՎ լարման ցանցերում տրանսֆորմատորների փոխարինման ծրագիրը:

Արդյունքում բաշխիչ ցանցում էլեկտրական էներգիայի տեխնոլոգիական կորուստների սահմանված 11,03% ցուցանիշը նվազել է՝ դառնալով 6,5% (2016-2022թթ.): Բաշխման ցանցում կորուստների կրճատումը կազմել է շուրջ 1,6 միլիարդ կՎտ/ժ, իսկ արդյունքում մթնոլորտ ջերմոցային գազերի արտանետման կրճատումը կազմել է շուրջ 684 հազար տոննա:

Կից աղյուսակում ներկայացնում ենք Ընկերության կողմից 2016-2027թթ. ընթացքում նշված ենթաուղղությունների մասին տեղեկատվությունը»:

Տեղեկատվություն

Էլեկտրական էներգիայի տեխնոլոգիական կորուստների կրճատմանը միտված, Ընկերության կողմից 2016-2027 թվականների ընթացքում իրականացված և իրականացվելիք ծրագրերի վերաբերյալ

հազ. դրամ առանց ԱԱՀ

	Ենթաուղղություններ	2016-2022	2023-2027
1	Էլեկտրաէներգիայի ավտոմատ հաշվառման համակարգի ներդրում	63 799 962	38 622 000
2	6(10) կՎ լարման ցանցերում տրանսֆորմատորների փոխարինում	5 548 306	222 000

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

1. Գյումրիում շարունակում է բարձր մնալ մթնոլորտային օդի փոշով աղտոտվածությունը: 2021թ-ի համեմատ 2022թ. փոշով աղտոտվածության աստիճանը ավելի է բարձրացել:
2. Գյումրու քաղաքապետարանի հաշվետվություններում կանաչ տարածքների վերաբերյալ տվյալները համահունչ չեն Գյումրու ԿՔԳԾ-ին: Կանաչ տարածքների էական աճ չի արձանագրվել:
3. ՀՀ շրջակա միջավայրի նախարարության կողմից Շիրակի մարզում, այդ թվում Գյումրիում 2021թ. արձանագրվել են ծանր մետաղների ՍԹԿ-ների գերազանցումներ:
4. Գյումրու համայնքապետարանի 2020-2021թթ. զարգացման ծրագրերի իրականացման հաշվետվությունների համաձայն աղբահանությունը բարվոք վիճակում է (համայնքում հավաքվել և աղբավայր է տեղափոխվել 95-96% աղբ):
5. Աղբի տեսակավորման, վերամշակման վերաբերյալ տվյալներ հաշվետվություններում չկան:
6. Գյումրին չունի ԵՄ չափորոշիչներին համապատասխան աղբավայր:
7. ՀՀ շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի 2021թ-ին Ախուրյան գետում հայտնաբերվել է Ֆոսֆատ իոն, արսեն, մանգան, ընդհանուր ֆոսֆոր, կախույթային չոր նյութեր,

ամոնիում իոն, նիտրիտ իոն, երկաթ, մոլիբդեն գետն ունեցել է 4-րդ դասի աղտոտվածություն ամոնիում իոնի, երկաթի, նիտրիտ իոնի, կախույթային չոր նյութերի, բարձր աղտոտվածության պատճառով: 2022թ. 4-րդ եռամսյակի տվյալների համաձայն Ախուրյան գետի ջրի որակը Ամասիա գյուղից ներքև, Գյումրի քաղաքից վերև և Բագարան գյուղից ներքև հատվածներում նոյեմբերին գնահատվել է «միջակ» (3-րդ դաս), Գյումրի քաղաքից ներքև՝ «վատ» (5-րդ դաս):

8. Քաղաքի 2020-2021թթ. զարգացման ծրագրերի հաշվետվություններում միջոցառումներ նշված չեն ջրային ռեսուրսների համար սահմանված թիրախներին հասնելու վերաբերյալ միջոցառումներ:
9. Քաղաքում իրականացվել են ճանապարհաշինական և քաղաքային լուսավորության փոխարինման որոշակի միջոցառումներ:

ՎԶԵԲ-ի ֆինանսավորմամբ իրականացված «Գյումրու քաղաքային ճանապարհներ» ծրագրի մասին: Ծրագրի շրջանակներում վերանորոգվել են Գյումրու մի շարք փողոցներ, 33 փողոցներում տեղադրվել են էներգախնայող ԼԵԴ լամպեր: Համայնքը չի իրականացնում ջերմոցային գազերի արտանետումների նվազման գնահատում:

ՎԶԵԲ-ի ֆինանսավորմամբ իրականացվել են «ՀԷՑ - Բաշխիչ ցանցի արդիականացում», «Հայկական էլեկտրական ցանցեր»-ի ներդրումային ծրագիր» ծրագրերը: Սակայն ծրագրերով առանձնացված չեն դիտարկվել կոնկրետ Գյումրու համար նախատեսված միջոցառումները:

Գյումրու ԿՔԳԾ-ում ներկայացված տեղեկատվության մատուցման ձևաչափն անհարմար է օգտագործման համար:

ԱՂԲՅՈՒՐՆԵՐ

1. «Կանաչ քաղաքի գործողությունների ծրագիր Գյումրի քաղաքի համար» ծրագիր
2. 2020 թվականին Գյումրի համայնքի հնգամյա զարգացման ծրագրի (2017-2021 թթ.) իրականացման վերաբերյալ հաշվետվություն
3. 2021 թվականին Գյումրի համայնքի տարեկան աշխատանքային պլանի իրականացման վերաբերյալ հաշվետվություն
4. ՎԶԵԲ-ի 2022թ. մարտի ««Կանաչ քաղաքներ» ծրագրի միջանկյալ գնահատում» փաստաթուղթ
5. Կանաչ քաղաքների շրջանակ 2(GrCF2 W2) – «ՀԷՑ» Ներդրումային Ծրագիր
6. ՀՀ կառավարության պաշտոնական կայք
7. ՀՀ շրջակա միջավայրի նախարարության «Շրջակա միջավայրի և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի պաշտոնական կայք
8. Գյումրու քաղաքապետարանի պաշտոնական կայք
9. Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի պաշտոնական կայք
10. Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի կանաչ քաղաք ծրագրի կայք

Հավելված 1

"Ecolur" Informational NGO Address: 49/2 Hanrapetutyan, Yerevan, Armenia E-mail: ecolurpressclub@gmail.com Web site: www.ecolur.org Tel. (37491) 92 12 64 mob.	ECOLUR NEW INFORMATIONAL POLICY IN ECOLOGY	**«ԷկոԼուր» տեղեկատվական ՀԿ** Հասցե՝ Հանրապետության 49/2, Երևան, Հայաստան Էլ. հասցե՝ ecolurpressclub@gmail.com Էլ. կայք՝ www.ecolur.org Բջջ.՝ (+37491) 92 12 64

Գյումրի համայնքի ղեկավար

պարոն Վարդգես Սամսոնյանին

ՀԱՐՑՈՒՄ

Հարգելի պարոն Սամսոնյան,

«ԷկոԼուր» տեղեկատվական ՀԿ-ն իրականացնում է «Եղիր տեղեկացված Երևանում և Գյումրիում Կանաչ քաղաքների պլանների և ծրագրերի մասին» ծրագիրը: Ելնելով Ծրագրի նպատակներից, համաձայն «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի, խնդրում ենք տրամադրել տեղեկատվություն հետևյալի մասին.

1. Որքա՞ն գումար է հատկացվել ՎԶԵԲ-ի կողմից Գյումրի քաղաքի «Կանաչ քաղաք» գործողությունների ծրագրի մշակման համար:
2. Գյումրու ավագանու «ՀՀ Շիրակի մարզի Գյումրի համայնքի «Կանաչ քաղաք գործողությունների ծրագիր»-ը հաստատելու մասին» N 232-Ա որոշմամբ հաստատված Ծրագրով նախատեսված կարճաժամկետ գործողություններից որո՞նք են իրականացվել, ի՞նչ ծավալով և ամեն գործողության համար որքա՞ն գումար է ծախսվել Ծրագրի մեկնարկից առ այսօր: Ստորև ներկայացված են այդ միջոցառումները:

Ա. Տրանսպորտ՝ 8 գործողություն

- Նոր հանրային տրանսպորտի ցանցի օպերատորի մոդել, ավտոբուսային հավաքակազմի արդիականացում և միասնական սակագնային ու տոմսային համակարգ
- Ավտոբուսային կանգառների ենթակառուցվածքի արդիականացում, այդ թվում՝ իրական ժամանակում ուղևորներին տրամադրվող տեղեկատվության (ԻԺՈւՏ) (RTPI) համակարգի ներդրմամբ
- Նոր հեծանվային ուղիների և հեծանվային կայանատեղի ենթակառուցվածք

- Հետիոտնի համար նախատեսված ճանապարհային կողմնորոշիչ նշանների համաքաղաքային ցանց
- Քայլելուն և հեծանվավազքին նվիրված գովազդային արշավներ
- Կայուն քաղաքային շարժունակության ծրագիր (ԿՔՇԾ) Գյումրու համար
- Տվյալների հավաքագրման համաքաղաքային ծրագիր և տրանսպորտային մոդել
- Հանրային ավտոբուսների հանրակազմի արդիականացում՝ արտանետումների նվազեցված մակարդակով տրանսպորտային միջոցների համալրմամբ

Բ. Շենքեր, էներգամատակարարում և լուսավորություն՝ 10 գործողություն

- Էներգաարդյունավետության մասին իրազեկում և տեղեկատվության տարածում բնակելի հատվածում
- Ցածր եկամուտ ունեցող սպառողների լուսատուները ԼԵԴ լամպերով փոխարինելու արշավ
- Բնակելի շենքերի ջերմային արդիականացման պետություն-մասնավոր գործընկերության (ՊՄԳ) ծրագիր
- Համայնքային Էներգետիկ տեղեկատվական համակարգ և Էներգակառավարում
- Էներգախնայողության կատարողականի պայմանագրերի (ԷԿՊ) և էներգետիկ ծառայություններ մատուցող ընկերությունների (ԷԾՄԸ) հետ պայմանագրերի կնքում
- Հանրային շենքերի ջերմային արդիականացման ծրագիր
- Հանրային գնումներում էներգաարդյունավետ ապրանքների և ծառայությունների ձեռքբերման հայեցակարգային փաստաթղթի մշակում
- «Կանաչ» շենքերի խրախուսում
- Քաղաքի փողոցային լուսավորության էներգաարդյունավետ արդիականացում
- Վերականգնվող էներգիայի միջին և խոշոր համակարգերի (ՎԷՀ) ներդրում

Գ. Արդյունաբերություն՝ 1 գործողություն

- Աղտոտված արդյունաբերական տարածքների հետազոտում և ռիսկերի նվազեցում

Դ. Կոշտ կենցաղային թափոններ՝ 6 գործողություն

- Ապօրինի բաց աղբավայրերի վերացում և աղտոտված տարածքների վերականգնում, գործող աղբավայրի պատշաճ կառավարում
- Թափոնների հավաքման և դրանց գործող վճարային համակարգերի վերանայում ու վերամշակելի նյութերի հավաքման առանձին համակարգի գործարկում
- Քաղաքային կոշտ թափոնների հեռացման և վերամշակման նոր ենթակառուցվածքի հիմնում
- ՔԿԹ մորֆոլոգիայի ուսումնասիրություն և վերամշակման ենթակա նյութերի շուկայական հետազոտություն և թափոնների որակին առնչվող արձանագրություններ մշակում

- Իրականացնել թափոնների կառավարման իրազեկման պարբերական արշավները (5R)

Ե. Ջրային ռեսուրսներ՝10 գործողություն

- Գյումրու ջրամատակարարման ցանցի ենթակառուցվածքի և ակտիվների համար գույքագրման և ԱՏՀ-ի (GIS) նախապատրաստում
- Ջրամատակարարման և ջրի պահանջարկի վերաբերյալ բարելավված տվյալներ և վերլուծություն
- Արտահոսքի նվազեցման գործողությունների ծրագրի (ԱՆԳԾ) մշակում
- ԱՆԳԾ-ի իրականացման համար իրավական և ֆինանսական մեխանիզմների մշակում
- Մատակարարման համակարգի՝ արտահոսքի ամենաբարձր մակարդակ ունեցող մասերի նորոգում և վերականգնում
- Պատրաստել գույքագրում և ԱՏՀ (GIS) կեղտաջրերի ենթակառուցվածքի համար
- Կեղտաջրերի վերաբերյալ գործողություն-ների ծրագրի և մրցութային փաստաթղթերի կազմում ենթակառուցվածքի առաջարկվող արդիականացման համար
- Ջրհեռ համակարգերի վերականգնում և ընդլայնում
- Կեղտաջրերի մաքրման համակարգի վերականգնում և ընդլայնում
- Կանաչ տարածքներում հանրային օգտագործման ջրի ենթակա-ռուցվածքի արդիականացում

Զ. Հողօգտագործում՝ 7 գործողություն

- Մշակել կայուն քաղաքային պլանավորման չափանիշներ Գյումրի քաղաքի համար և մշակել նորացված գլխավոր հատակագիծ և գոտևորման կանոնակարգեր
- Մշակել ԱՏՀ-ի վրա հիմնված հողօգտագործման տվյալների բազա և քաղաքի տեղեկատվական մոդել (ՔՏՄ) Գյումրու համար
- Ստեղծել նպատակային քաղաքային պլանավորման ուղեցույց և գործիքներ
- Գործարկել քաղաքային պլանավորումը և շինարարական կանոնակարգերը
- Քաղաքային պլանավորում և կայուն զարգացում, հանրային հատվածի ներուժի ստեղծում
- Հանրային զբոսայգիների և կանաչ տարածքների կառավարման ռազմավարություն
- Կանաչ ենթակառուցվածքի, զբոսայգիների և բաց տարածքների ապահովում

Է. Միջոլորտային՝ 5 գործողություն

- Մշակել համայնքի օդի որակի վերահսկման համակարգ
- Իրականացնել կլիմայի ռիսկի գնահատում ջրի, տրանսպորտի, կոշտ թափոնների և շինարարության, էներգիայի և լուսավորության ոլորտների ենթակառուցվածքների համար

- Նախապատրաստել կլիմայի նկատմամբ Գյումրու ենթակառուցվածքի դիմակայության բարձրացման գործողությունների ծրագիր
- Մշակել արտակարգ իրավիճակներին պատրաստվածության գործողությունների ծրագիր
- Ներդրումներ կլիմայի փոփոխության հարմարվողականության և դիմակայության միջոցառումների համար:

3. Գյումրու քաղաքապետարանն ի՞նչ միջնաժամկետ և երկարաժամկետ միջոցառումներ է նախատեսում իրականացնել մինչև 2035թ-ը Գյումրի քաղաքի «Կանաչ քաղաք» գործողությունների ծրագրով սահմանված տեսլականին հասնելու համար:
4. Ի՞նչ դժվարություններ և խոչընդոտներ են ի հայտ եկել կարճաժամկետ գործողությունների իրականացման փուլում:
5. Իրականացված միջոցառումների արդյունքում 2019-2022թթ. ինչքա՞ն էլեկտրաէներգիայի խնայողություն է ապահովվել Գյումրի քաղաքում, և ինչքանո՞վ են կրճատվել մթնոլորտային օդ արտանետվող ջերմոցային գազերը, որքանո՞վ է նվազել մթնոլորտային օդի աղտոտվածության աստիճանը, Ծրագիրն ինչքանո՞վ է նպաստել ջրային ռեսուրսների աղտոտվածության կրճատմանը, քանի՞ հեկտար կանաչ տարածք է հիմնվել, ե՞րբ է նախատեսվում գոյություն ունեցող ապօրինի աղբավայրերի վերջնական փակումը և նոր աղբավայրի շահագործման մեկնարկը, քանի՞ տոկոսով է նորացվել Գյումրի քաղաքի ավտոշարժակազմը:

Հարգանքով՝
Ինգա Զարաֆյան՝

«ԷկոԼուր» տեղեկատվական ՀԿ-ի նախագահ,

կենսաբանական գիտությունների թեկնածու

14.12.2022թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00 Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

N 01/30018-2022
«20» 12 2022թ.

«ԷԿՈԼՈՒՐ» ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԿ
ՆԱԽԱԳԱՀ ԻՆԳԱ ԶԱՐԱՖՅԱՆԻՆ

Հարգելի տիկին Զարաֆյան

Ի պատասխան դեկտեմբերի 14-ի Ձեր հարցման հայտնում ենք, որ «Գյումրու քաղաքային ճանապարհներ» ծրագրի շրջանակներում, CW-ICB-2019/1 պիլոտային-2 բաղադրիչով քաղաքի թվով 33 փողոցներում 2021թ.-ին տեղադրվել է արտաքին լուսավորության 1201 LED լուսատու ավտոմատ կառավարման համակարգով: Հայտարարված բաց մրցույթի արդյունքում հինգ մասնակիցներից հաղթող է ճանաչվել «ՊրոԴինամիկ» ՍՊԸ և «Գուանդոնգ Մեյսոն Թեքնոլոջիս» լտդ. ՀՁ-ն: Պայմանագրի արժեքը կազմել է 332,523.6 եվրո:

20.12.2022
x

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

Կատ.՝ Ա. Վարդանյան
Հեռ.՝ 0312 2 22 27

Հավելված 2

"Ecolur" Informational NGO Address: 49/2 Hanrapetutyan, Yerevan, Armenia E-mail: ecolurpressclub@gmail.com Web site: www.ecolur.org Tel. (37491) 92 12 64 mob.	ECOLUR NEW INFORMATIONAL POLICY IN ECOLOGY	**«ԷԿՈԼՈՒՐ» տեղեկատվական ՀԿ** Հասցե՝ Հանրապետության 49/2, Երևան, Հայաստան Էլ. հասցե՝ ecolurpressclub@gmail.com Էլ. կայք՝ www.ecolur.org Բջջ.՝ (+37491) 92 12 64

Գյումրի համայնքի ղեկավար

պարոն Վարդգես Սամսոնյանին

ՀԱՐՑՈՒՄ

Հարգելի պարոն Սամսոնյան,

Վերակառուցման և զարգացման բանկի ֆինանսական աջակցությամբ Գյուրիում իրականացվել է «Գյումրու քաղաքային ճանապարհներ» ծրագիրը: Ծրագրի ընդհանուր արժեքը, ըստ ՎԶԵԲ-ի կայքի, 21.9 միլիոն եվրո է, որից 14,6 միլիոն եվրոյի սուվերեն վարկ տրամադրել է ՎԶԵԲ-ը:

Ծրագրի Բնապահպանական և սոցիալական ազդեցության գնահատականի համաձայն՝ նախատեսվել են Գյումրու Երևանի մայրուղի, Գարեգին Նժդեհի պողոտա, Վազգեն Սարգսյանի փողոց, Տիգրան Մեծի պողոտա, Սայաթ-Նովայի փողոց գլխավոր փողոցների, Ն.Ղորղանյան, Վարպետաց, Ջիվանու, Կոմիտասի, Գերցենի երկրորդային փողոցների, Մուշ II ճանապարհի, Ազնավուրի և Հայուհու հրապարակների վերանորոգման և էներգախնայող լամպերով լուսավորության արդիականացման, ջրահեռացման համակարգերի վերականգնման աշխատանքներ, հետիոտնային մայթերի վերականգնման աշխատանքներ:

2021թ. դեկտեմբերի 9-ի 2017-Ն ՀՀ կառավարության որոշմամբ (https://e-gov.am/gov-decrees/item/37406/) «Գյումրու քաղաքային ճանապարհներ» ծրագրի 2022 թվականին ստանձնած պարտավորությունների ամբողջ ծավալով կատարելու նպատակով Գյումրու ընտրված փողոցների՝ ներառյալ հետիոտնային անցումների ցանցի և ջրահեռացման համակարգը վերակառուցման համար ՀՀ կառավարությունը տրամադրեց 948 միլիոն 312.8 հազար դրամ, իսկ 2022թ. նոյեմբերի 3-ի 1695-Ն որոշմամբ՝ (https://e-gov.am/gov-decrees/item/39249/) 325 միլիոն 129 հազար դրամ, որից 275 միլիոն 697 հազարը դրամաշնորհ՝ ուղիղ վճարումներ կատարելու նպատակով և 49 միլիոն 433 հազար դրամը՝ որպես համաֆինանսավորում: Գումարները նախատեսված են շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգման, ինչպես նաև մեքենաների և սարքավորումների ձեռքբերման համար:

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի համաձայն՝ խնդրում ենք տեղեկացնել.

- «Գյումրու քաղաքային ճանապարհներ» ծրագրի բնապահպանական և սոցիալական ազդեցության գնահատման փաստաթղթում նշված բոլոր փողոցները վերանորոգվե՞լ են, թե՞ կան փողոցներ, որոնց վերանորոգումն ու լուսավորության արդիականացման աշխատանքները շարունակվում են և ավելացե՞լ են նոր փողոցներ: Եթե դեռ կան վերանորոգվող փողոցներ, խնդրում ենք նշել դրանք:
- ՀՀ կառավարության տրամադրած միջոցներով ի՞նչ շենք-շինություններ են վերանորոգվելու, ի՞նչ մեքենա-սարքավորումներ են ձեռք բերվելու և ի՞նչ նպատակով:
- Որքանո՞վ են կրճատվել ջերմոցային գազերի արտանետումները «Գյումրու քաղաքային ճանապարհներ» ծրագրի մեկնարկից ի վեր:

Հարգանքով՝
Ինգա Զարաֆյան՝

«ԷկոԼուր» տեղեկատվական ՀԿ-ի նախագահ,

կենսաբանական գիտությունների թեկնածու

20.03.2023թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00 Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

N 01/14058
«24» 03 2023թ.

«ԷԿՈԼՈՒՐ» ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԿ
ՆԱԽԱԳԱՀ ԻՆԳԱ ԶԱՐԱՖՅԱՆԻՆ

Հարգելի տիկին Զարաֆյան

Ի պատասխան 2023թ.-ի մարտի 20-ի Ձեր հարցմանը տեղեկացնում ենք.

- «Գյումրու քաղաքային ճանապարհներ» ծրագրի (Ծրագիր) Բնապահպանական և սոցիալական ազդեցության գնահատման հաշվետվությունում ներկայացված փողոցներում և հրապարակներում նախատեսված հիմնանորոգման աշխատանքներն ավարտվել են: Նշված փողոցների և հրապարակների հիմնանորոգումն իրագործվել է Ծրագրի Ա Տրանշի շրջանակներում: Հիմնանորոգված բոլոր փողոցներում 2021թ.-ին տեղադրվել են լուսադիոդային լուսատուներ, բացառությամբ Վարպետաց, Ջիվանու, Աբովյան և Ղորղանյան փողոցների, որտեղ ճարտարապետական տեսքին համահունչ տեղադրվել են դեկորատիվ հենասյուներ և լուսատուներ: Նորոգվել են նշված փողոցների ջրահեռացման համակարգերը և կատարվել է ճանապարհային կահավորում:
- Հարցման մեջ նշված կառավարության որոշումների համաձայն տրամադրված միջոցներով իրականացվել են Գյումրի քաղաքի թվով 22 փողոցների և 1 հրապարակի հիմնանորոգման աշխատանքները՝ Ծրագրի Բ Տրանշի երեք չափաբաժինների շրջանակներում, ինչպես նաև արտաքին լուսավորության համակարգի արդիականացումը: Առաջին երկու չափաբաժիններով հիմնանորոգվել են Դաշտենց, Սունդուկյան, Աթարբեկյան, Մատնիշյան, Մազմանյան(Գորկու փողոցից մինչև Տերյան), Մազմանյան(Տերյան փողոցից մինչև առաջին գերեզմանատուն), Թումանյան, Պուշկին, Մյասնիկյան, Մայակովսկի, Օզանյան, Տեր-Գաբրիելյան փողոցները, Կարսի խճուղին, Կարսի

խճուղու առաջին նրբանցքը, Երևանյան խճուղու Այգաբաց 4-րդ շարքը, իսկ երրորդ չափաբաժնով՝ Կայարանամերձ հրապարակը, Արագած թաղամասի մեկ փողոց, Մուսայելյան, Ռուսթավելի, Շինարարների, Տիմիրյազև փողոցները, Ե/Գ բանավան տանող Գարեգին Ա փողոցը մինչև մանկապարտեզ և Շարա Տալյան փողոցի միջնամասը: Նշված բոլոր փողոցներում և հրապարակում արդիականացվել է փողոցային լուսավորության համակարգը: Նորոգվել կամ լիովին փոխարինվել են նշված փողոցների ջրահեռացման համակարգերը, կատարվել է ճանապարհային կահավորում:

- Ծրագրի շրջանակներում ջերմոցային գազերի արտանետումների ծավալների նվազեցման գնահատում նախատեսված չէ:

24.11.2023

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

Կատ.՝ Ս. Ջանոյան
Ա. Վարդանյան
0312 2 22 27

"Ecolur" Informational NGO Address: Hanrapetutyan 49/2 Yerevan, Armenia E-mail: ecolurpressclub@gmail.com Web site: www.ecolur.org Tel. (37491) 92 12 64 mob.	ECOLUR NEW INFORMATIONAL POLICY IN ECOLOGY	«ԷկոԼուր» տեղեկատվական ՀԿ Հասցե՝ Հանրապետության 49/2, Երևան, Հայաստան Էլ. հասցե՝ ecolurpressclub@gmail.com Էլ. կայք՝ www.ecolur.org Բջջ. (+37491) 92 12 64

«Հայկական էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի

գլխավոր տնօրեն պարոն Կարեն Հարությունյանին

ՀԱՐՑՈՒՄ

Հարգելի պարոն Հարությունյան,

«ԷկոԼուր» տեղեկատվական ՀԿ-ն իրականացնում է «Եղիր տեղեկացված Երևանում և Գյումրիում Կանաչ քաղաքների պլանների և ծրագրերի մասին» ծրագիրը, որի նպատակն է լայն հասարակությանն իրազեկել Երևանում և Գյումրիում իրականացվող Կանաչ քաղաքների պլանների և ծրագրերի մասին:

«Հայկական էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ն իրականացնում է «Կանաչ քաղաքների շրջանակ 2(GrCF2 W2) – «ՀԷՑ» Ներդրումային Ծրագիր»-ը: Ըստ Ծրագրի նկարագրության՝ այն իրենից ներկայացնում է 2017 թվականին կնքված՝ 80 միլիոն ԱՄՆ դոլար գումարի չափով ծրագրի (OpID 48957) երկարացում՝ «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի 10-ամյա (2016-2027թթ.) ներդրումային ծրագրի 1-ին փուլի իրականացման համար, որն ուղղված է Հայաստանում էլեկտրաէներգիայի բաշխման ենթակառուցվածքի արդիականացմանը: Այն ՀԷՑ-ին հնարավորություն կընձեռի իրականացնել ներդրումային ծրագրի 2-րդ փուլի («Ծրագիր») 2021-2022թթ-ի կապիտալ ներդրումները, որոնք, ի թիվս այլ ոլորտների, ուղղված կլինեն նաև Հայաստանի երկու խոշոր քաղաքներին՝ Երևանին և Գյումրիին: Ծրագիրը Հայաստանում Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի ներգրավվածության երկարացումն է՝ ՎԶԵԲ-ի «Կանաչ քաղաքներ» ծրագրի միջոցով: «ՀԷՑ»-ի ներդրումային ծրագիրն ուղղված է «Կանաչ քաղաքների գործողությունների պլաններում» (GCAP) սահմանված առաջնահերթություններին և մշակվել է՝ երկու քաղաքների քաղաքապետարանների հետ սերտորեն խորհրդակցելով և հաշվի առնելով «Կանաչ քաղաքների գործողությունների պլանները», որոնք ընկած են երկու քաղաքների նկատառումների հիմքում:

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի համաձայն՝ խնդրում ենք տեղեկացնել.

- Այս Ծրագրի շրջանակներում ի՞նչ կապիտալ ներդրումներ է կատարել կամ կատարելու ՀԷՑ-ը:
- Ի՞նչ միջոցառումներ են նախատեսված «Կանաչ քաղաքների շրջանակ 2(GrCF2 W2) – «ՀԷՑ» Ներդրումային Ծրագրով», որոնք ուղղված են Երևանի և Գյումրիի «Կանաչ քաղաքների գործողությունների պլաններում» սահմանված առաջնահերթություններին, դրանցից որո՞նք են իրականացվել, որո՞նք՝ ոչ և ի՞նչ պատճառներով:
- Արդյո՞ք հաշվարկվել է, թե ինչքան էլեկտրաէներգիայի խնայողություն է ապահովվել Երևան և Գյումրի քաղաքներում իրականացված միջոցառումների արդյունքում և ինչքանով են կրճատվել մթնոլորտային օդ արտանետվող ջերմոցային գազերը:
- Որքա՞ն գումար է ծախսվել այդ միջոցառումների իրականացման համար:

10.01.2023թ.

Ինգա Զարաֆյան՝

«ԷկոԼուր» տեղեկատվական ՀԿ-ի նախագահ,

կենսաբանական գիտությունների թեկնածու

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ՑԱՆՑԵՐ

ԳԼԽԱՎՈՐ ՏՆՕՐԵՆ

ՀՀ, ք. Երևան, 0047, Ա. Արմենակյան 127, հեռ.՝ +374 (10) 65 00 86

№ 08-ԳՏ-05/24
«17» 01 2023
Ձեր _____

«ԷԿՈԼՈՒՐ» տեղեկատվական ՀԿ
նախագահ Ինգա Զարաֆյանին

Հարգելի Ինգա Զարաֆյան,

Ընկերությունը գոհունակությամբ է վերաբերվում Ձեր կողմից իրականացվող «Եղիր տեղեկացված Երևանում և Գյումրիում Կանաչ քաղաքաների պլանների և ծրագրերի մասին» ծրագրին, որի նպատակն է լայն հասարակությանն իրազեկել Երևանում և Գյումրիում իրականացվող Կանաչ քաղաքաների պլանների և ծրագրերի մասին:

Ընկերությունը 2016-2027 թվականների համար պլանավորել և իրականացնում է լայնածավալ (347 մլրդ դրամ) ներդրումային ծրագիր: Ծրագրի շրջանակում ի թիվս այլ նպատակների առկա են աշխատանքներ, որոնք միտված են էլեկտրական էներգիայի տեխնոլոգիական կորուստների կրճատմանը: Դրանցից առավել խոշորներն են՝

- ✓ Էլեկտրաէներգիայի ավտոմատ հաշվառման համակարգի ներդրման,
- ✓ 6(10) կՎ լարման ցանցերում տրանսֆորմատորների փոխարինման ծրագիրը:

Նշված աշխատանքներն պլանավորելիս Ընկերությունը խնդիր չի ունեցել տարանջատել դրանք ըստ Երևանի կամ Գյումրու: Դրանք պլանավորվել են Ընկերության սպասարկման ողջ տարածքի համար՝ ըստ առավել խնդրահարույցների: Արդյունքում բաշխիչ ցանցում էլեկտրական էներգիայի տեխնոլոգիական կորուստների սահմանված 11.03% ցուցանիշը նվազել է դառնալով 6.5% (2016թ.-ից 2022թ.): Բաշխման ցանցում կորուստների կրճատումը կազմել է շուրջ 1.6 մլրդ կՎտ.ժ, իսկ արդյունքում մթնոլորտ ջերմային գազերի արտանետման կրճատումը կազմել է շուրջ 684 հազ տոնա:

Կից աղյուսակում ներկայացնում ենք Ընկերության կողմից 2016-2027թթ. ընթացքում նշված ենթաուղղությունների մասին տեղեկատվությունը:

Առդիր՝ 1 (մեկ) էջ:

Կ.Հարությունյան

Կատ.՝ Յու. Գավրիլենկո
Հեռ 010 59 13 30

Տեղեկատվություն

Էլեկտրական էներգիայի տեխնոլոգիական կորուստների կրճատմանը միտված, Ընկերության կողմից 2016-2027 թվականների ընթացքում իրականացված և իրականացվելիք ծրագրերի վերաբերյալ

հազ. դրամ առանց ԱԱՀ

	Ենթաուղղություններ	2016-2022	2023-2027
1	Էլեկտրաէներգիայի ավտոմատ հաշվառման համակարգի ներդրում	63 799 962	38 622 000
2	6(10) կՎ լարման ցանցերում տրանսֆորմատորների փոխարինում	5 548 306	222 000